«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր
_______________ Մ. Մուրադյան
«23» ____10____ 2025 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Ալեքսանդր Սերգեյի Կոչուբեանի՝ «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի և Ա. Գ. Սաֆարյանի քննարկեց, քննարկեց Ալեքսանդր Սերգեյի Կոչուբեանի՝ «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Իրավաընկալման բնաիրավական հայեցակարգը բնական իրավունքը կապում է բանականության գաղափարի հետ և այն մեկնաբանում այնպիսի երևույթների միջոցով, ինչպիսիք են բոլոր մարդկանց հավասարությունը և ազատությունը, արժանապատվությունը, մարդու անօտարելի իրավունքներն ու ազատությունները: Այս համատեքստում մարդու իրավունքները ենթադրվում են որպես բնական, անօտարելի և սրբազան, դրանք օբյեկտիվորեն գոյություն ունեն որպես մարդու ծննդյան հետևանք, արտահայտում են նրա գոյի սոցիալական և բնական պայմանները: Հաշվի առնելով բնաիրավական հայեցակարգի պատմական զարգացման ուղենիշները և ընդհանուր բնութագիրը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել

համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված բնաիրավական հայեցակարգի տեսության փոխակերպմանը, ինչպես նորագույն ժամանակաշրջանի իրավական ուսմունքներում, այնպես էլ գործող օրենսդրությունում:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասը ենթագլուխ պարունակող չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական հետազոտման և մշակվածության աստիճանը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձաքննությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Բնական իրավունքի պատմական զարգացման էվոլյուցիան» վերտառությամբ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է բնական իրավունքի պատմական զարգացման հիմնական ուղենիշները, ինչպես նաև բնական իրավունքի ազդեցությունը հայ իրավական-քաղաքական ուսմունքների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «Բնական իրավունքի տեսական և մեթոդաբանական տեսանկյունները» վերտառությամբ գլխում հեղինակը նախ՝ ներկայացրել է բնական իրավունքի տեսության ընդհանուր բնութագիրը, ապա՝ անդրադարձել և վերլուծության է ենթարկել բնական իրավունքի տեսության մեթոդաբանական առման էությունը և առարկայական առման առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Բնական իրավունքի տեսական-հայեցակարգային հիմնադրույթները» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել և վերլուծել է բնական իրավունքի տեսական-հիմնադրույթային վարկածները, անդրադարձել իրավաբանական նատուրալիզմին (բնական իրավունքին)՝ որպես արդարության կանխադրույթի:

Ատենախոսության չորրորդ՝ «Բնական իրավունքի տեսության տրանսֆորմացիան նորագույն ժամանակաշրջանի իրավական ուսմունքներում և գործող օրենսդրությունում» վերտառությամբ գլխում հեղինակն անդրադարձել է այնպիսի կարևորագույն հարցերի, ինչպիսիք են՝ արդի իրավական ուսմունքներում բնաիրավական հայեցակարգի փոխակերպումը, իրավաբանական լիբերտարիզմը՝ որպես բանական և պոզիտիվ իրավունքի հակասականության հաղթահարման տեսական հայեցակարգ, բնական իրավունքի հիմնադրույթների փոխակերպումը Հայաստանի Հանրապետության պոզիտիվ իրավունքում (գործող օրենսդրությունում):

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթը: Վերջինիս շրջանակներում հեղինակը ուշադրություն է

հրավիրում բնական իրավունքի կենսագործման համար անհրաժեշտ պետական և վերպետական մակարդակներում իրավունքների ճանաչման և վավերացման գործընթացների վրա: Հարկ է նկատել, որ թվարկած հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր և կարող էր ներառվել ատենախոսության «Եզրակացություն» բաժնում:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է ատենախոսության երկրորդ գլխի երրորդ պարագրաֆի ձևակերպումը (էջ 78), որտեղ հեղինակը, ներկայացնելով սոցիալական փոքրամասնությունների առանձնահատուկ շահերի ընկալումը հասարակական իրավագիտակցության շրջանակներում, դրական իրավունքի դաշտում որպես իրավունք է դիտարկում մարդու վերտադրության կամ անմահության նպատակով ինքնին կամ իր հարազատների կլանավորմումը, մինչդեռ աշխարհի գրեթե բոլոր պետություններում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, արգելված է մարդու վերարտադրողական կլոնավորումը (ՀՀ Սահմանադրություն 25-րդ հոդված): Ավելին, «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիան (Օվիեդոյի կոնվենցիա) ուղղակի արգելում է մարդու կլոնավորումը (կրկնօրինակի ստեղծումը, պատճենումը), ինչպես նաև ցանկացած միջամտություն, որն ուղղված է գենետիկորեն մեկ այլ՝ ողջ կամ մահացած մարդուն գենետիկորեն նմանակ մարդու ստեղծմանը:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Առանձին դեպքերում չեն պահպանվել հղման կանոնները, մասնավորապես, չեն նշվել օգտագործված աղբյուրների էջերը (էջ 21՝ հղում 10, էջ 25՝ հղում 16, էջ 26՝ հղում 19, էջ 33՝ հղում 32, էջ 55՝ հղում 64, էջ 66՝ հղում 75, էջ 67՝ հղում 77, էջ 73՝ հղում 90):

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի՝ «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և արդիական տեսանկյուններ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի՝ «Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. պատմական և

արդիական տեսանկյուններ» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2025 թ. հոկտեմբերի 23-ի նիստում, արձանագրություն թիվ 5 :

Ամբիոնի պետ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր _____ Ա. Է. Սուքիասյան

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ «ՀՈՍԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ